

**ՀԱՅԱՍՏԱՆԻՆ ՎՐԱՑԻՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՏՐՎԱԾ  
«ՍՈՄՆԻԹ» ԱՆՎԱՆՄԱՆ ՀԱՐՑԻ ՇՈՒՋ ԵՎ  
XIX դ. ՖՐԱՆՍԻԱՑԻ ՀԱՅԱԳԵՏՆԵՐԻ  
ՄՈՏԵՑՈՒՄՆԵՐԸ**

Վրաց սկզբնաղբյուրներում Հայաստանին տրված *Սոմխիթ* անունն իր ընդհանուր և մասնավոր նշանակությամբ վերաբերում է Հայաստանի տարածքին<sup>1</sup>, սակայն վրաց պատմագրությունում գերիշխում է *Սոմխիթին* տարբեր «էթնո-քաղաքական» իմաստներ տալու մոտեցումը<sup>2</sup> Հայաստանի Գուգարք նահանգի հյուսիս-արևելյան տարածքը «վրացականացնելու» նպատակով<sup>3</sup>:

<sup>1</sup> Խ. Թորոսյանը, հետազոտելով «Շուշանիկի վկայաբանության» վրացերեն համառոտ (ենթադրվում է X դ. առաջ) խմբագրությունը, Արսեն Սափարեցու (IX դ.) «Յաղագս բաժանման վրաց և հայոց», Ջուանշերի (XI դ.) «Վախթանգ Գորգասալի կյանքը», ինչպես նաև «Թագակիրների պատմությունն ու գովաբանությունը» և այլ երկեր, նշել է, որ դրանցում օգտագործվել է *Սոմխիթի* անվանաձևը՝ «միշտ Հայաստան իմաստով» (Թորոսյան Խ., «Թագակիրների պատմությունն ու գովաբանությունը» որպես Ջաքարյան Հայաստանի ու Ջաքարյանների պատմության սկզբնաղբյուր, Երևան, 1992, էջ 120–122, 161):

<sup>2</sup> Տեն Թորոսյան Խ., Топоним “Сомкити” в грузинских первоисточниках, Ереван, 2003, с. 24–35.

<sup>3</sup> Այնպես, ինչպես, օրինակ, որոշ վրաց պատմաբաններ, աղավաղելով հայկական Ջավախքի, Կղարջքի, Տալքի անվանումները, «ստեղծում» են ցեղեր՝ «ջավախներ, կղարջներ, տալքիներ» և ներկայացնում իբրև, ի թիվս այլոց, «վրաց ազգը» ձևավորած ազգակից ցեղեր (Бердзенишвили Н., Джавахашвили И., Джанашиа С., История Грузии, под ред. С. Джанашиа, Тбилиси, 1946, с. 6, հմմտ.՝ Рамисшвили П., Социально-политическая история Грузии – տե՛ս Очерки истории стран Южного Кавказа, Мультиперспективный взгляд на историю, Ереван, 2009, с. 75, 80 և այլն):

Ֆրանսիացի հայագետ Սեն-Մարտենը (1791–1832 թթ.) Հայաստանի պատմությանը և աշխարհագրությանը նվիրված իր աշխատությունում Մեծ Հայքի Գուգարք աշխարհի տեղադրության մասին գրելով, որ այն «հյուսիսից սահմանակից էր վրացիների երկրին, իսկ արևելքից և արևմուտքից ողողվում էր Կուր գետով»<sup>4</sup>, այնուհետև վկայում է, որ օտար զավթումների հետևանքով կատարված քաղաքական բաժանումներն իր ժամանակի առումով հանգեցրել էին առկա վարչատարածքային իրավիճակին: Ըստ Սեն-Մարտենի՝ Գուգարքի արևմտյան հատվածը հայտնվել էր «Ախլցխայի փաշայի» կառավարած «վերին Վրաստանի արևմտյան մասում, իսկ արևելյանը՝ «Ռուսաստանի կայսրության ենթակայության տակ»<sup>5</sup> գտնվող վրացական՝ *Սոմխիթի* կամ հայերենով *Սոմխէթ*<sup>6</sup> նահանգի» մեջ, ինչն ուղեկցվում էր հայկական տարածքների պատմաաշխարհագրական անվանումների խեղաթյուրմամբ<sup>7</sup>: Սեն-Մարտենը

<sup>4</sup> Saint-Martin M. J., *Mémoire historique et géographique sur l'Arménie*, t. I, Paris, 1818, p. 79.

<sup>5</sup> XIX դ. առաջին երկու տասնամյակներում Հյուսիսային Հայաստանի, Արևելյան Վրաստանի, Արևելյան Այսրկովկասի տարածքները անցել էին Ռուսական կայսրությանը (տե՛ս Մելքոնյան Ա., *Ջավախքը XIX դարում և XX դարի առաջին քառորդին*, Երևան, 2003, էջ 154):

<sup>6</sup> Թ. Խ. Հակոբյանը, Ստ. Կ. Մելիք-Բախշյանը և Հ. Խ. Բարսեղյանը նշում են. «Սոմխեթ - գավառ Թիֆլիս նահանգում: Ոմանք վրաց աղբյուրներում ողջ Հայաստանին տրված այս անվամբ կոչում են նաև Թիֆլիսից հարավ ընկած Գուգարք աշխարհի Ծոթովոր գավառը (տե՛ս Հակոբյան Թ. Խ., Մելիք-Բախշյան Ստ. Կ., Բարսեղյան Հ. Խ., *Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան*, Երևան, 1998, հ. 4, էջ 657):

<sup>7</sup> Սեն-Մարտենը Հայաստանի, մասնավորապես, նրա հյուսիսային նահանգների տեղանունների վերաբերյալ հաղորդել է, որ իր ժամանակ «գավառների մեծ մասի անուններն ամբողջությամբ մոռացված են» բացառությամբ *Տաշիր*, *Ջավախք*, *Թեղդ*, *Արտահան* տեղանունների» (Saint-Martin M. J., op. cit., p. 76, 83):

«Սոմխիթ»-ից ծագած է համարել «սոմեխի անվանումը, որով վրացիներն անվանում են հայերին»<sup>8</sup>:

Ֆրանսիացի հայագետ և վրացագետ Մարի Բրոսեն (1802–1880 թթ.) «Քարթլիս ցխովրեբա»<sup>9</sup> և Վախուշտիի (1696–1757 թթ.)<sup>10</sup> «Քարթլիի աշխարհագրական նկարագրություն» երկերի ֆրանսերեն թարգմանությունների մեկնություններում<sup>11</sup> անդրադառնալով վրաց մատենագրությունում Հայաստանին տրվող անվանման խնդրին՝ գրել է, որ «Սոմխեթ անունը վրացերենում ունի երկակի նշանակություն. նախ՝ բուն Հայաստանն է, որի 15 նահանգները նկարագրել է Մովսես Խորենա-

---

<sup>8</sup> Saint-Martin M. J., op. cit., p. 79.

<sup>9</sup> Մ. Բրոսեն «Քարթլիս ցխովրեբա» («Քարթլի կյանքը») ժողովածուն հրատարակել է «Վրաստանի պատմություն՝ անտիկ ժամանակաշրջանից մինչև XIX դ.» վերտառությամբ աշխատությունում: Նա նշել է, որ իր թարգմանած այդ ժողովածուն Վրաստանում հայտնի է (ჭრადლის გზავრება) («Քարթլի կյանքը») վերնագրով, որը «տրվել է այս ոճի մի պատմությանը XIII դարում, քանզի հայ հեղինակ Ստեփանոս Օրբելյանը այն հիշատակում է իր տոհմի պատմության մեջ (Բրոսեն Ստեփանոս Օրբելյանի աշխատությունը այստեղ հիշատակել է Սեն-Մարտենի հետազոտության միջոցով, տես Saint-Martin M. J., *Mémoire historique et géographique sur l'Arménie*, t. II, Paris, 1819, p. 64): Այնուամենայնիվ, ժամանակագրությունները, ընդհանուր առմամբ, բոլոր վրաց պատմաբանների կողմից անվանված են *ցեօցրեճեճեօ*՝ «կյանք» (վրացերենում նշված է հոգնակի ձևով): Եթե ես փոխարինել եմ «կյանք» բառը մեկ այլ բառով, դա ոճի խնդիր է: Ինչ վերաբերվում է *Քարթլիին*, որը փոխարինում եմ *Վրաստան* բառով, ապա՝ XV դարից առաջինն ունի առանձնակի նշանակություն, իսկ երկրորդն ավելի ընդարձակ՝ ընդհանրական. այս երկուսը պետք չէ շփոթել» (*Histoire de la Géorgie depuis l'antiquité jusqu'au XIX<sup>e</sup> siècle traduite du géorgien par M. Brosset, I partie, Histoire ancienne, jusqu'en 1469 de J.-C., S.-Petersbourg, 1849, p. 1, com. 1*):

<sup>10</sup> Մ. Բրոսեն Վախուշտի մահվան տարեթիվը նշել է 1770 թ. հետո (*Description géographique de la Géorgie par tsarévitch Vakhoucht d'après l'original autographe par M. Brosset, S.-Petersbourg, 1842, p. IX*):

<sup>11</sup> Մ. Բրոսեն Վախուշտիի «Քարթլիի աշխարհագրական նկարագրությունը» ֆրանսերեն թարգմանությունը հրատարակել է վրացերեն բնագրով՝ օգտվելով «հեղինակի բնագրային ձեռագրից» (*Ibid.*, p. X):

ցին (V դ.)<sup>12</sup> իր Աշխարհացույցում»<sup>13</sup>: Այնուհետև, Բրոսեն նկատի ունենալով Հայաստանի հյուսիս-արևելյան մասում հետագայում Վրաստանի (Géorgie) կատարած գավթումները, գրել է, որ «Սոմխեթ է» նաև այն երկրամասը, որը «հաճախ անցել է մի ազգից մյուսին...»<sup>14</sup>: Բրոսեն նշել է, որ «վրաց արքաների» իշխանության տակ գտնվող տարածքների սահմանները հստակ չէին, քանի որ «դրանք հազվադեպ և երբեք որոշակի ժամանակով չեն միավորվել նրանց գավազանի ներքո, քանզի շատ թույլ էին, որպեսզի ամբողջությամբ հաստատեին իրենց անկախությունը. այս արքաները իմացել են միայն օգտվել իրենց տիրակալների թուլությունից, իրենց ազատագրման համար»<sup>15</sup>:

Վախուշտին «Սոմխիթի» տերմինը, ընդհանուր առմամբ, օգտագործել է Հայաստանի առումով<sup>16</sup> և, մասնավորապես, նրա հյուսիս-արևելյան<sup>17</sup> այն մասի կապակցությամբ, որը Դեբեդից և Բոլնիսից<sup>18</sup> արևելք գտնվող փոքր լեռան միջև է՝ քցիա-

<sup>12</sup> Brosset M., Deux historiens arméniens: Kiracos de Gantzac, Histoire d'Arménie, Oukhtanès d'Ourha, Histoire en trois parties, St.-Petersbourg, 1870, p. 3:

<sup>13</sup> Histoire de la Géorgie depuis l'antiquité jusqu'au XIX<sup>e</sup> siècle traduite du géorgien par M. Brosset, S.-Petersbourg, 1858, p. X.

<sup>14</sup> Ibid.

<sup>15</sup> Ibid., p. X-XI.

<sup>16</sup> Histoire de la Géorgie depuis l'antiquité jusqu'au XIX<sup>e</sup> siècle traduite du géorgien par M. Brosset, II<sup>e</sup> partie, Histoire moderne, S.-Petersbourg, 1856, p. 13, 29.

<sup>17</sup> *Սոմխիթը* մասնավոր նշանակությամբ՝ որպես Գուգարքի հյուսիս-արևելքում գտնվող տարածք, հիշատակված է վրաց Շահնավազ (Վախտանգ Ե) թագավորի կողմից՝ Սանահնի առաջնորդ Սարգիս Եպիսկոպոս Արղուրյանին ուղղված նվիրագրում (տե՛ս Մուրադյան Պ., Հայ եկեղեցու պատմության սկզբնաղբիւներ Ա, Յիշատակարան Սանահնոյ վանից (Սանահնի քլօթուկը), Ս. Էջմիածին, 2007, էջ 186–187):

<sup>18</sup> Բոլնիսը (Բոլնիս-Խաչեն գյուղը) Գուգարաց աշխարհի Բողնոփոր գավառի կենտրոնն էր (Երեմյան Ա., Հայաստանը ըստ «Աշխարհացոյց»-ի, Երևան, 1963, էջ 45):



յից մինչև «Լելվար» (Լալվար) և Լոջ լեռները: Վախուշտին նույն այդ մասի կապակցությամբ օգտագործել է նաև «ներկայիս Քարթլի-Սոմխիթի» (Ճարժլի-Նոմխոտ) արտահայտությունը, որն ըստ Մ. Բրոսեի, պետք է հասկանալ այն «Սոմխեթ»-ը<sup>19</sup>, որը «վրացական Հայաստանն» է (Arménie géorgienne)<sup>20</sup>: Այսինքն՝ Բրոսեն նկատի ունի Հայաստանի հյուսիս-արևելյան մասի վարչաքաղաքական դրությունը՝ Վախուշտի նկարագրած ժամանակաշրջանի առումով:

Կարևոր է Մարի Բրոսեի կարծիքը, համաձայն որի՝ վրացիների կողմից հայերին տրվող «սոմեխի» անվանաձևը ծագել է «հարավ» («le sud») նշանակություն ունեցող «սամխտեթի» (Նաժեթջո)<sup>21</sup> բառից, որն ըստ նրա «կարող է մատնանշել երկու ազգերի փոխադարձ դիրքը», այնպես ինչպես հայերն էլ «վրացիներին» են անվանել «Վիրք», որը հնարավոր է համարել՝ առաջացած հայերեն «վեր» բառից<sup>22</sup>:

*Սոմխիթ/Սոմխեթ* անվան ծագման կապակցությամբ հետազայում հայտնվել են տարբեր կարծիքներ, այն կապելով սեպագիր աղբյուրներում հիշատակված *Սուխմե* տեղանվան հետ: Գ. Խալաթյանը Հայաստանին և հայերին տրվող «Սոմխեթ» և «սոմեխ» վրացերեն անվանաձևերն ենթադրաբար ծագած է համարել ասորեստանյան արձանագրությունների

---

<sup>19</sup> Մ. Բրոսեն Վախուշտի տեքստերի թարգմանություններում «Սոմխիթի» (Նոմխոտ) անվանաձևը նշել է «Սոմխեթի» (Somkheti) ծևով (Description géographique de la Géorgie ..., p. 140–141, 146–147, Histoire de la Géorgie..., II<sup>e</sup> partie, p. 12–13, 29):

<sup>20</sup> Description géographique de la Géorgie..., p. 145.

<sup>21</sup> Նաժեթջո («հարավ»), Նաժեթջոնա («հարավային») (տե՛ս Գորգաձե Ռ. Կ., Վրացերեն-հայերեն բառարան, Երևան, 2005, էջ 491).

<sup>22</sup> Histoire de la Géorgie depuis l'antiquité jusqu'au XIX<sup>e</sup> siècle traduite du géorgien par M. Brosset, I partie, S.-Petersbourg, 1849, p. 15, com. 5.

«Սուխմե երկրի»<sup>23</sup> անվանումից<sup>24</sup>, որը տեղադրվում էր Արա-  
ծանիից դեպի հյուսիս<sup>25</sup>, որտեղ, ըստ նրա «գտնվում էր բուն  
հայկական շրջանը»<sup>26</sup>:

Ն. Մառը գտնում է, որ «Սոմեխիա», այսինքն՝ «Somqeq»  
վրացերեն նշանակում է *Հայաստան*: Ինչ վերաբերում է ան-  
վան ստուգաբանությանը<sup>27</sup>, ապա նրա առաջարկած ենթա-

<sup>23</sup> Խեթական սեպագիր արձանագրություններում «Ցուխմա» (տե՛ս Хачатрян В. Н., Восточные провинции хеттской империи, Ереван, 1971, с. 114, Арутюнян Н. В., Топонимика Урарту, Ереван, 1985, с. 174), Մուխապա (Մուխմա), որը տեղորոշվել է Իսուվայի (Մոփք) և Հայասայի հարևանությամբ (Քոսյան Ա., Հայկական լեռնաշխարհի տեղանունները (ըստ Խեթական սեպագիր աղբյուրների), Երևան, 2004, էջ 104–105, Ղազարյան Ռ., Հայաստ. քաղաքական և մշակութային պատմությունը, Երևան, 2009, էջ 68): Սեպագիր սկզբնաղբյուրներում Մուխապայից հյուսիս և արևելք ոչ մի վկայություն չկա «վրացական ցեղերի» վերաբերյալ:

<sup>24</sup> Այն հիշատակվում է Թիգլաթպալասար I-ի (մ.թ.ա. 1115–1077) և Սալմանասար III-ի (մ.թ.ա. 858–824) ասորեստանյան սեպագիր արձանագրություններում (տե՛ս Дьяконов И. М., Ассииро-вавилонские источники по истории Урарту. - Вестник древней истории, 1951, N 2, с. 280, 295, այսուհետև՝ АВИИУ):

<sup>25</sup> Հմմտ. Патканов К., Ванские надписи и значение их для истории Передней Азии, С. Петербург, 1881, с. 132, 141.

<sup>26</sup> Халатянц Г. А., О некоторых географических названиях древней Армении в связи с данными ванских надписей, (Б. м. и г.), с. 7.

<sup>27</sup> Ն. Մառը նախ՝ նշելով, որ Թամար թագուհու (1184–1213) դարաշրջանում՝ նրա գահակալության առաջին տասնամյակներին հիշատակվող «մեսխ» (mesq) կամ «մեխ» (meq)-ը նշանակում էր «գավառական վրացի», գրել է. «Ավելի հին ժամանակներում վրացիների մոտ այդ տերմինի հետ կապվել է թեպետև քարթեր (քարթվել) - վրացիներին ազգակից, սակայն մի ինքնուրույն ցեղի մասին պատկերացում»: Նա ենթադրել է, որ meq-ի (<\*mehq-i //mesq-i) տերմինից է առաջացել so-meq-ի, նշանակելով «մեխ»-երի կամ «մեսխ»-երի երկիր», և «իրենց համար էկզոտիկ այդ ձևը փոխառնելով վրացիները... դրանից հասցրեցին ձևավորել տեղանվան քարթական ձևը-«*աժանցով*»՝ Somq-eθ-i, Somq-eθ-i՝ վրացիների մոտ *Հայաստան* նշանակությամբ (որի համար ինքը նշել է Somq-eθ-i անվանաձևը), իսկ someq-i՝ *հայ* (Марр Н. Я., О языке и истории абхазов, Москва-Ленинград, 1938, с. 51. см. Академия наук СССР, Грузинский филиал, Труды института Абхазской

դրություններում առկա են էթնիկական հասկացությունների անհամապատասխանություններ:

Գ. Մելիքիշվիլին, հետևելով Գ. Խալաթյանցի կարծիքին, ենթադրել է, որ վրացիների կողմից հայերին տրվող «սոմեխի» անվանաձևը, ամենայն հավանականությամբ, առաջացել է ասորեստանյան և խեթական սկզբնաղբյուրներում հիշատակվող *Սուխմի* երկրանունից (նրա ենթադրությամբ՝ «Սոխմի» արտասանությունից), ինչը Մելիքիշվիլին բացատրել է վրացական ցեղերի մերձավորությամբ *Սուխմի* երկրին: Այսպիսի մոտեցմամբ, ըստ նրա տեսակետի, *Սուխմե* երկիրն «Արածանիից ձգվում էր դեպի հյուսիս-արևելք՝ մինչև ներկայիս Էրզրումը»: Նրա կարծիքով՝ արևելավրացական ժողովրդի կորիզը հանդիսացող վրացական ցեղերը բնակվել են «ներկայիս Վրաստանից արևմուտք՝ Ճորոխի ակունքների մոտ»<sup>28</sup>: Նմանապես, առանց որևէ սկզբնաղբյուրային հիմքի, Գ. Մելիքիշվիլին «վրացական ցեղերին» նշել է մ.թ.ա. II հազարամյակի կե-

---

культуры им. акад. Н. Я. Марра, вып. X, հմմտ. Հայ ժողովրդի պատմություն, Երևան, 1971, հ. I, էջ 240): Ի. Դյակոնովը ենթադրել է, որ «մոսխ» տերմինը ընդհանրապես ցեղանուն չէ, այլ տարբեր ցեղերին տրված մականուն է» (Дьяконов И. М., Предыстория армянского народа, Ереван, 1968, с. 217–218): Կարելի է տեսնել, որ *Սոսխթա/Սոսխթե* անվանման ստուգաբանությունը «մեխխ» կամ «մեխ» բաղադրատարրերով անհիմն է, քանզի պայմանավորված է իրարամերժ ենթադրություններով:

<sup>28</sup> Գ. Մելիքիշվիլին անհիմն կերպով «մուշկերին» համարել է «վրացախոս ցեղեր», իսկ «քարթվելների» ինքնանվանումը համադրել Կորդվաց լեռների «կարդուխներ լեռնային ցեղերի հետ», ինչպես նաև «վրացախոս ցեղերի» ներկայություն է ենթադրել Կիլիկյան Տավրոսում մ.թ.ա. I հազարամյակի սկզբին (Меликишвили Г. А., К истории древней Грузии, Тбилиси, 1959, с. 78, 108): Ի. Դյակոնովը քննադատաբար նշել է, որ անհնարին է «Տաբալ» և «իբեր» տերմինների համադրումը՝ «տիբարեններ» տերմինի միջոցով (տե՛ս Дьяконов И. М., Предыстория армянского народа, с. 218):

սերին «Եփրատ գետի վերին հոսանքում գտնվող» Հայասայի հարևանությամբ<sup>29</sup>:

Ի. Ղյակոնովը Սալմանասար III-ի արձանագրություններում հիշատակված Սուխմուի վերաբերյալ գրել է, որ այն պետք է փնտրել ներկայիս Մազկերտի-Էրզինճանի (պատմական Երիզա-Երզնկա)<sup>30</sup> շրջանում՝ միաժամանակ նշելով՝ «հմտ. վրաց. Սոմխեթի - Հայաստան»<sup>31</sup>, «սոմեխի» «հայ» նշանակում է վերին Եփրատի վրա գտնվող Սուխմու շրջանի բնակիչ»<sup>32</sup>:

Ս. Երեմյանը, ասուրական արձանագրություններում հիշատակված Սուխմե երկիրը տեղադրելով Արածանիի հովտում, Բալու քաղաքի շրջանում, գրել է. «Գ. Խալաթյանցի այն պնդումը, թե someh-i տերմինը ծագում է *Zuhma* կամ *Suhmu* (աքքադերեն) երկրի անունից, որը պաշտպանեցին Բ. Բ. Պիոտրովսկին և Գ. Ա. Մելիքիշվիլին առկա փաստերով չի հաստատվում...»<sup>33</sup>:

Հայ մատենագրության մեջ Հայաստանին վրացիների կողմից տրվող «Սոմխիթի» անվանումը հիշատակվել է «Սոմխեթ» ձևով: Այսպես՝ Վարդան Արևելցին (XIII դ.), պատմելով

<sup>29</sup> Меликишвили Г. А., К истории древней Грузии. с. 170–171.

<sup>30</sup> Մեծ Հայքի Բարձր Հայք աշխարհի Եկեղյաց (կենտրոնը՝ Երիզավան) և Ծոփաց աշխարհի Պաղնատուն (որի հյուսիսում Մազկերտ բերդն էր) գավառների տարածքում (տե՛ս Հովհաննեսեան Հ. Միքայել, Հայաստանի բերդերը, Վենետիկ – Ս. Ղազար, 1970, էջ 2, 108):

<sup>31</sup> АВИИУ, с. 296, прим. 12.

<sup>32</sup> Дьяконов И. М., Предыстория армянского народа, с. 196. Ի. Ղյակոնովը նշել է, որ «Սուխմու շրջանը, որ խեթական ժամանակներից հայտնի էր «Յուխմա» անվամբ, հավանաբար մտել է հայ ժողովրդի կազմավորման շրջանի մեջ. որպես նրա հյուսիսային սահման, քանզի դրանով նրա հյուսիսային հարևան վրացիները՝ կազմել են «սոմեխի»՝ «հայ» բառը» (История древнего Востока. Часть вторая, Москва, 1988, с. 109, прим. 2).

<sup>33</sup> Տե՛ս Հայ ժողովրդի պատմություն, հ. I, էջ 240, ծան. 34:



Սմբատ Բ Տիեզերակալի (977–989) կրտսեր եղբոր՝ Գուրգենի՝ Մեծ Հայքի Գուգարք աշխարհի արևելքում ժառանգած տիրույթների և նրանից սերած հայ Բագրատունիների ճյուղավորման՝ Կյուրիկյանների Տաշիր-Ձորագետի թագավորության մասին գրել է. «Սմբատ, որ Տիեզերակալ կոչեցաւ. սա զմեծանիստ պարիսպն Անույ շինեաց, եւ զկաթողիկէն հիմնարկէ. եւ կրտսեր եղբայրն ժառանգէ զՏաշիր Սեւորդովքն Ձորոյգետին. եւ զԿայեն եւ զԿայծուն, զԽորխոռունիք՝ որ ի Խոռայ շինեցաւ, որ է Խոշոռնի եւ Խոռակերտ, եւ զԲագունիք՝ որ է Բագկերտ ի գաւառն Տաշրայ. եւ այլ բերդք անուանիք եհաս Գուրգենայ, զոր Վիրք Սոմխէթ կոչեն: Եւ ի նմանէ սերեցան թագաւորքն Դաւիթ<sup>34</sup>, Աբաս եւ Կիրիկէ»<sup>35</sup>:

Ղ. Ինճիճյանն, անդրադառնալով Վարդան Արևելցու հաղորդմանը, «Սոմխէթ» տեղանվան առնչությամբ նախ ընդհանուր առմամբ նշել է. «Յայս անուն կոչեն Վիրք զՀայաստան... և այս չէ ինչ նոր սովորութի, զի և Վարդան զբագում տեղիս Հայաստանեաց յիշեալ յատուրս Գուրգենայ եղբոր բ. Սմբատայ՝ ի տասներորդ դարուն, ի Վրաց կոչին ասէ Սոմխէթ, յորմէ յայտ է թէ նաև ի գիրս նոցա կոչի այնպէս»<sup>36</sup>: Այնուհետև Վար-

<sup>34</sup> Գուրգեն I-ի որդին՝ Դավիթ Անհողին (989–1048):

<sup>35</sup> Հաւաքումն Պատմութեան Վարդանայ Վարդապետի, Վենետիկ, 1862, էջ 90: Հովհաննես Դրասխանակերտցին պատմելով Սմբատ I Բագրատունու (890–914) և Գագիկ I Արծրունու (908–943) (տես Վարդանյան Վ. Մ., Վասպուրականի թագավորության սահմանները IX–XI դարերում, ՊԲՀ, 1969, N 4, էջ 234) ժամանակների մասին՝ Սևորդիներին հիշատակել է որպէս Ուտիք աշխարհի Ուտի գավառի տեր (Յովհաննու կաթողիկոսի Դրասխանակերտցոյ Պատմութիւն Հայոց, Թիֆլիս, 1912, էջ 127): Իսկ, ինչպէս հետևում է Վարդան Արևելցու հաղորդումից Սմբատ Բ Տիեզերակալի ժամանակաշրջանում նրանց իշխանական տիրույթների մեջ էր նաև Ձորագետը, որը Գուրգեն I-ը միավորեց իր նորաստեղծ՝ Տաշիր-Ձորագետի կազմի մեջ:

<sup>36</sup> Ինճիճեան Ղ., Հնախօսութիւն աշխարհագրական Հայաստանեայց աշխարհի, հ. I, Վենետիկ, 1835, էջ 9:

դան Արևելցու նույն հաղորդման մեջ Կայան բերդի հետ հիշատակվող Կայծոն բերդի<sup>37</sup> կապակցությամբ Ղ. Ինճիճյանը գրել է, որ Գուրգենին ժառանգություն հասած գավառների տարածքն է անվանվել «Սոմխէթ»: Մեկ այլ հատվածում նա նշում է. «Կայծոն: Յիշատակ է գայս Կարդան երկիցս, և ցուցան է լինել ի կողմանս Գուգարաց՝ զի ասէ. «Եւ կրտսեր եղբայրն (բ. Սմբատայ) ժառանգէ զՏաշիր Սևորդուվքն Ձորոգետին, և զԿայեան, և զԿայծոն... ի գաւառն Տաշրայ, և այլ բերդք անուանիք եհաս Գուրգենայ՝ զոր Կիրք Սոմխէթ կոչեն»<sup>38</sup>:

Անհիմն կերպով տարբերակելով «Սոմխիթ» և «Սոմխէթ»<sup>39</sup> անվանաձևերը որպես տարբեր պատմաաշխարհական և էթնիկական իմաստ արտահայտող հասկացություններ՝ վրաց պատմագրության մեջ գերակայում է այն տեսակետը, թե «Սոմխիթ» նշանակում է «Ստորին Քարթլի»<sup>40</sup>: Պ. Զոբանյանը, քննա-

<sup>37</sup> Ըստ Մխիթար Այրիվանեցու՝ «Բջնոյ, Կայենոյ և Կայծոնոյ» բերդերը կառուցել էր Պապականաց տոհմից Հոլում Վասակը՝ Գրիգոր Մագիստրոսի հայրը (Մխիթարայ Այրիվանեցոյ Պատմութիւն Հայոց, ի լոյս ընծայեաց Մկրտիչ Էմին, Սոսկվա, 1860, էջ 57-58): Մ. Հովհաննիսյանի կարծիքով Հոլում Վասակը ոչ թե ամբողջությամբ էր կառուցել Կայան և Կայծոն բերդերը, այլ ի թիվս շատ այլ բերդերի՝ նորոգել և վերակառուցել էր (< Միքայել Վ. Յովհաննեսեան, Հայաստանի բերդերը, Վենետիկ-Ս. Ղազար, 1970, էջ 578):

<sup>38</sup> Ղ. Ինճիճեան, Ստորագրութիւն հին Հայաստանեայց, Մեծ Հայք, Վենետիկ, 1822, էջ 524: Ղապիթ Շինարար թագավորի կողմից հայկական հողերի գավթելու մասին վրաց սկզբնաղբյուրում նշված է, որ նա «գրավեց Հայքի (Սոմխիթի) բերդերը, Գագ, Տերունական, Նոր բերդ, Մանիցգոմ...» (տե՛ս Մելիքսեթ-Բեկ Լ. Մ., Վրաց աղբյուրները Հայաստանի մասին, Խ. Ա. Երևան, 1934, էջ 218):

<sup>39</sup> Ըստ Ա. Շանիձեի, «-ջ» (-եթ) վերջածանցը աշխարհագրական անունների հատուկ ածանցիչ է, օր.՝ Նոթեջո - Հայաստան, ՆՅՅՆեջո - Պարսկաստան» (Շանիձե Ա., Հին վրացերենի քերականություն, վրացերենից թարգմ. Հ. Գ. Մարգարյան, Պ. Ա. Զոբանյան, Երևան, 1983, էջ 68):

<sup>40</sup> Վրաց պատմագրության մեջ այս տեսակետի և դրանից բխող կեղծիքների մանրամասն քննադատությունը տե՛ս Թորոսյան Խ., նշվ. աշխ., էջ 150-166:

դատորեն մոտենալով այսպիսի տեսակետին, նշում է, որ XVIII դարից այդպիսի մոտեցում է մշակվել վրացական պաշտոնական փաստաթղթերում և պատմագրության մեջ: 1770 թ. Հերակլ II-ի Ռուսական արքունիք ուղարկված մարդահամարի ցուցակում «Սոմխիթի» անվան հետ արիեստական նույնացվել է «Ստորին Քարթլի» անվանումը<sup>41</sup>: Պ. Չոբանյանը նշել է, որ վրաց իրականության մեջ Վրաստանի թագավորի տիտղոսաշարը՝ երբեք պատմական բովանդակություն ունեցող բանաձևի չվերածվելու ավանդույթը «խախտելու վճռական քայլ կատարվեց ժժ դարի երկրորդ կեսին... ինչը և շարունակվում է մինչև այսօր՝ վրաց հետազոտողների կողմից ետադարձ ժխտելով նաև նախորդ դարերի մտայնությունն ու իրականությունը վերածելով այն բանավեճային խնդրի»<sup>42</sup>:

Ս. Երեմյանը, նկատի ունենալով «Աշխարհացոյց»-ի հաղորդումը Հայքի և Վիրքի միջև Կուր գետի սահման լինելու մասին («Աշխարհ Վիրք, յեւից կալով Եգերայ, յերի Սարմատիոյ առ Կաւկասով, մինչեւ ցԱղուանից սահման, եւ մինչեւ ցՀայոց սահմանն՝ առ Կուր գետովն...»<sup>43</sup>), այսինքն՝ Վիրքի Կուրից հյուսիս գտնվելու հանգամանքը, քննադատել է Ի. Ջավախաշ-

<sup>41</sup> Հերակլ II-ի (1745–1798) ուղարկած մարդահամարի ցուցակի այդ հատվածը քննելով՝ Պ. Չոբանյանը նշել է, որ վրացերեն բնագրի խնդրո առարկա հատվածի («Եւ այս Սոմխիթը (Հայք) ու Սաբարաթաշվիլոն հավասարեցված (նույնացված – Պ. Չ.) են Քարթլին, կիսով Քարթլի են անվանում և այժմ կոչում են Ստորին Քարթլի [Ստորին Վիրք]») ռուսերեն թարգմանության մեջ հրատարակողը «թույլ է տվել բնագրի ընկալման ազատություն» (Չոբանյան Պ., Հայ-ռուս-վրացական փոխհարաբերությունները ժժ դարերի երկրորդ կեսին, Ս. Էջմիածնին, 2006, էջ 135–136):

<sup>42</sup> Նույն տեղում, էջ 134–135:

<sup>43</sup> Երեմյան Ս. Տ., նշվ. աշխ., էջ 104: Հմմտ. «Եւ զհին սահմանսն, որ յառաջուն էր լեալ յերկիրն Հայոց և ընդ երկիրն Վրաց, որ է ինքն մեծ գետն Կուր...» (Փաստտոսի Բիւզանդացոյ Պատմութիւն Հայոց, բնագիրը Զ. Պատկանյանի, Երևան, 1987, էջ 322):

վիլիի հրատարակած «Վրաստանի պատմական քարտեզում» ներկայացված Վիրքի բաժանման համակարգը, նշելով որ «հնում «Քվեմո Քարթլի» («Ստորին Քարթլի») հասկացողություն չի եղել... Վրաց աշխարհի այս բաժանումը՝ *վերին, միջին և ստորին* մասերի հնում գոյություն չի ունեցել և այս երկրի կենտրոնական մասն է միայն կոչվել «Վերին աշխարհ Վրաց»...»<sup>44</sup>:

Խ. Թորոսյանը, քննելով սկզբնաղբյուրների հաղորդումները նշել է, որ վրաց սկզբնաղբյուրներում ոչ միայն չկա «Քվեմո Քարթլի» («Ստորին Քարթլի») արտահայտությունը, այլև՝ «հին հեղինակների գործերում չկա «Սոմխեթի» ձևը, այլ միայն՝ «Սոմխիթի» տեղանունն է: Միննույն ժամանակ, ըստ նրա կարծիքի, ««Սոմխեթի» և «Սոմխիթի» նույն բառն է, նույն բառի երկու տարբերակը», որը նշանակում է Հայաստան<sup>45</sup>:

«Վրաստանի դարձը» երկի վրացերեն տեքստը հայտնաբերվել է 1888 թ., որը 1890–1891 թթ. հրատարակել է Ե. Թաղաշվիլին: 1900 թ.<sup>46</sup> լույս տեսած երկի ռուսերեն թարգմանությունում Ալեքսանդր Մակեդոնացուն առնչված հաղորդման մեջ մի շարք երկրների շարքում հիշատակված *Сомхития* երկրա-

---

<sup>44</sup> Երեմյան Ա., նշվ. աշխ., էջ 83: Պ. Մուրադյանը գրել է, որ «մի դեպքում վրաց տեքստի «Սոմխիթ»-ը համապատասխանում է ստորին Քարթլիի մի մասին, մյուս դեպքում՝ Հայաստանին առհասարակ, իր հյուսիսային մասով» (Վրաց ժամանակագրություն (1207–1318), թարգմանությունը հին վրացերենից, առաջաբանը և ծանոթագր. Պ. Մուրադյանի, Երևան, 1971, էջ 31):

<sup>45</sup> Торосян Х., Топоним «Сомхити» в грузинских первоисточниках, Ереван, 2003, с. 122–124; Թորոսյան Խ., նշվ. աշխ., էջ 123, 149, 152, 160, 161, Մելքոնյան Ա., նշվ. աշխ., էջ 38, Զոբանյան Պ., նշվ. աշխ., էջ 132: Տես նաև՝ Ղազարյան Հ. Կրկին հյուսիսային Գուգարքի տեղանունների շուրջ, ՊԲՀ, 2012, N 3, էջ 120–122:

<sup>46</sup> Обращение Грузии, перевод с древнегрузинского Е. С. Такайшвили. – տես Такайшвили Е. С., Источники грузинских летописей. Три хроники. – СМОМПК, вып. XXVIII, 1900, с. 1–216.



նունը Ե. Թադայշվիլին ծանոթագրել է. «Сомхития иначе Ар-  
 мения...»<sup>47</sup>, իսկ Տրդատ III-ի ժամանակների առումով ուղղակի  
 նշել է Армения-Հայաստան<sup>48</sup>: 1989 և 2008 թթ. այդ երկը վերա-  
 հրատարակվել է Ռ. Կ. Կիկնաձեի խմբագրությամբ և երկու  
 դեպքում էլ տեքստի թարգմանությունում իրավացիորեն նշվել  
 է Армения-Հայաստան երկրանունը: Սակայն թարգմանության  
 13-րդ ծանոթագրությունում խմբագիրը գրել է. «Տվյալ հուշար-  
 ծանում վկայված «Սոմխիթի» տեղանունը հավասարազոր է  
 «Սոմխեթի» - Հայաստան: Սակայն համեմատաբար ավելի ուշ  
 սկզբնաղբյուրներում «Սոմխիթի» առավելապես նշանակում է  
 Հայաստանին սահմանակից Վրաստանի նահանգ»<sup>49</sup>: Այնինչ  
 Ե. Թադայշվիլու մոտ խոսքը միայն Հայաստանին տրված  
 «Սոմխիթ»-ի անվան մասին է: «Սոմխիթ»-ին «Սոմխեթ»-ից  
 տարանջատումով, և, նույնիսկ «Ստորին Քարթլի» անվանման  
 հորինումով, «Սոմխիթի»-ն Վրաստանի նահանգ համարելը,  
 սկզբնաղբյուրներով չհիմնավորված և քաղաքականացված  
 տեսակետ է:

Այսպիսով, Հայաստանին տրված «Սոմխիթ» վրացական  
 անվանումը (և նրա «Սոմխեթ» անվանաձևը) ծագումնաբանու-  
 րեն էթնիկական հիմք չունի և իր ընդգրկմամբ սկզբնաղբյուր-  
 ներում կիրառվել է Վիրքի էթնոաշխարհագրական միջավայ-  
 րից և Կուր գետից հարավ գտնվող տարածքի կապակցու-  
 յամբ: Այս տեսակետից անհրաժեշտ է ուշադրություն դարձնել  
 Մ. Բրոսեի այն կարծիքին, ըստ որի, Սոմխիթ/Սոմխեթ անվան-  
 ումը ծագել է հայերին վրացիների կողմից տված «սոմեխի»  
 անվան՝ «սամխեթի» (სამხეთი), «հարավ» նշանակությամբ

<sup>47</sup> Նույն տեղում, էջ 8, ծան. 1.

<sup>48</sup> Նույն տեղում, էջ 18:

<sup>49</sup> <http://lib.rus.ec/b/132065/read#t1>:

բառից: Ուստի, Սոմխիթ/Սոմխեթ անվանածների կիրառման երկու դեպքում էլ խոսքը Վիրքից հարավ ընկած տարածքի մասին է՝ թե՛ ամբողջ Հայաստանի և թե՛ նրա հյուսիսային նահանգի՝ Գուգարքի արևելյան գավառների առումով:

АЛИСА ДУМИКЯН

К ВОПРОСУ О НАЗВАНИИ “СОМХИТИ” ДАННОГО  
АРМЕНИИ ГРУЗИНАМИ И ПОДХОДЫ  
ФРАНЦУЗСКИХ АРМЕНОВЕДОВ XIX ВЕКА

РЕЗЮМЕ

В грузинских источниках Армения упоминается как *Сомхити*. Согласно мнению Мари Броссе, происхождение данного армянам со стороны грузин названия “сомехи”, связано с грузинским словом “самхрети” (სამხრეთი), означающее “юг”.

При применении форм названия *Сомхити/Сомхет*, необходимо иметь ввиду, что речь идет об армянской территории к югу от Иверии (южная граница которой к северо-востоку от Армении проходила по р. Куре), т.е. как, в целом, о территории, всей Армении, так и о восточных гаварах ее северной провинции Гугарк.

**ON THE QUESTION OF THE NAME "SOMKHITI"  
GIVEN TO ARMENIA BY GEORGIANS AND THE  
APPROACHES OF THE 19<sup>th</sup> CENTURY FRENCH  
ARMENOLOGISTS**

**SUMMARY**

The name of *Somkhiti* is given to Armenia in the Georgian sources. According to the opinion of Mari Brosset, the origin of the name «Somekhi» given to Armenians by Georgians, is connected with the Georgian word «samkhreti» (სამხრეთი), which means «south».

While using the forms of the name *Somkhiti/Somkhet*, it is necessary to take into consideration that the Armenian territory to the south of Iberia (the southern border of which to the north-east of Armenia passed along the Kura River) is meant, i.e. as the territory of entire Armenia, as well as - eastern *gavars* of Armenia's northern province of Gugark.